

ԽԱՐԱԿՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

ՃԱՆԱԶԵՆՔ ԱԶԱՎՐԵԹՑԻ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻՆ

Լեռնային անհամեմատ փոքր տարածք զբաղեցնող Ջավախեթի լեռնաշխարհը շատ անվանի մարդիկ է տվել: Նրանց անունները այս կամ այն չափով հայտնի են լայն հասարակայնությանը: Բայց քչերը գիտեն այն անվանի չեմպիոնների մասին, ովքեր միջազգային բազմաթիվ մրցումների են մասնակցել, դարձել աշխարհի չեմպիոններ, նվաճել ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ, արժանացել գավաթների, պատվոգրերի, այլ պարգևների:

Միայն Ախալքալաքի Ազավրեթ գյուղն ունի տարբեր մարզածների աշխարհի եւ Եվրոպայի բազմաթիվ չեմպիոններ, անվանի մարզիչներ, միջազգային մրցումների հաղթողներ: Ուզում են պատմել նրանցից մի քանիսի մասին:



Տասնմեկ տարեկան հասակում Ակսանա Ավետյանը դարձավ Կարատե ԴՈ-ի գծով աշխարհի չեմպիոն: Մրցումներում նա շահել է 18 ոսկե, 12 արծաթե եւ 14 բրոնզե մեդալներ:

Ծնվել է 2004-ին, Ազավրեթում: Սովորել է տեղի, այնուհետև ուսումը շարունակել Ախալքալաքի Զովի.Թու-մանյանի անվան միջնակարգ դպրոցում, ուսման գերազանցիկ է:

Չեմպիոնուհու մայրը՝ վաստակաշատ բանասեր Մանուշակ Խաչատրյանը, ժամանակին սպորտի մեծ սիրահար էր, մանկուց երազել էր դառնալ կարատեիստ, սակայն չէր կարողացել իրականացնել իր ցանկությունը՝ գյու-

ղում այն ժամանակ համապատասխան պայմանների եւ մարզչի բացակայության պատճառով: Մոր երազանքը կատարեց նրա դուստրը՝ Ակսանան: Հայրը՝ Սասուն Ավետյանը, եւս սիրում էր զբաղվել սպորտով՝ շախմատ, բռնցքամարտ, դահուկավազք:

Ակսանայի ծնողները, տեսնելով դեպի մարզական կյանքն ունեցած նրա ծգտումը, նրան բերում են շրջկենտրոնի մանկական սպորտային դպրոց, մարզիչ Ռաֆայել Դարբինյանի մոտ: Տեսնելով նրա մարզական ունակությունները՝ մարզիչը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում իր նոր սանին: Փոքրիկ Ակսանան համառորեն ու նպատակասլաց հաղթահարում է բոլոր բարդ ու դժվարին դասերը:

Վերջին երեք տարիների ընթացքում Ակսանան մասնակցել է կարատեի հանրապետական եւ միջազգային բազմաթիվ մրցումների, որոնք տեղի ունեցան Թբիլիսի, Քուբայիսի, Գորի, Փոթի, Բաթումի, ինչպես նաև Երևան ու թուրքական Տրապիզոն քաղաքներում: Մրցումներում նա շատ անգամ է ճաշակել հաղթանակի բերկրանքը: Նրա համար աստեղային ժամ հանդիսացավ 2015 թվականի մայիսի 3-ը: Կարատեի աշխարհի մրցումներում, որին մասնակցում էին 52 երկրների մի քանի հարյուր մարզիկներ,

Ակսանան իր քաշային կարգում (35-40 կիլոգրամ) փայլուն հանդես եկավ, գրավեց առաջին տեղը, արժանացավ ոսկե մեդալի, դիպլոմի եւ հռչակվեց աշխարհի չեմպիոնուհի:

Հետագայում շատ ուրիշ մրցումների մասնակցեց մեր Ակսանան, գրավեց մրցանակային տեղեր եւ արժանացավ մեդալների, գավաթների ու պատվոգրերի:

Վրաստանի պատմության մեջ նա նման բարձունքների հասած առաջինն է իր տարիքային հասակում եւ քաշային կարգում:

Մեր շրջանի մյուս հայտնի մարզիկը Սիփան Շիպակցյանն է, նույնպես



ծնունդով ազավրեթցի: Բարձր առաջադիմությամբ ավարտել է գյուղի հանրային դպրոցը, հայերենին հավասար սովորել է վրաց լեզուն՝ շնորհիվ ուսուցչուհի Ռոզա Թամանյանի: Սիփանը 2010 թվականին ընդունվում է Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու անվան պետ-համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, 2014-ին գերազանց առա-

ջադիմությամբ ավարտում բակալավ-րի դասընթացները եւ ընդունվում նույն ֆակուլտետի մագիստրատուրան: Ուսման տարիներին զբաղվել է ծանրամարտով: Դրա համար նա ուներ կայուն հիմք եւ լավ նախադրյալներ: Ծանրամարտով են զբաղվել հայրը՝ Պավելը, հորեղբայրները՝ Ժորան ու Սարգիսը:

Եվ այսպես, ծանրամարտի աշխարհ մտած Սիփան Շիպակցյանն ընդամենը երկու տարվա ընթացքում մասնակցեց համալսարանական ու Եվրոպական մրցումների: 2014-ի գարնանը Թբիլիսիում կայացած ծանրամարտի մրցումներում Սիփանը 70 կիլոգրամ քաշային կատեգորիայում նվաճեց առաջին տեղը՝ արժանանալով ոսկե մեդալի եւ Վրաստանի չեմպիոնի կոչման:

Այնուհետև, նույն թվականի աշնանը դարձյալ Թբիլիսիում Շիպակցյանը մասնակցեց ծանրամարտի համա-Եվրոպական մրցումներին (70 կիլոգրամ քաշային կատեգորիա), հաղթահարեց 140 կիլոգրամի արգելքը եւ գրավեց առաջին տեղը: Սիփանն արդեն ծանրամարտի Եվրոպայի չեմպիոնն էր:

Հատկանշական է, որ մեկ տարվա ընթացքում Սիփանը մասնակցեց ծանրամարտի մի շարք այլ մրցումների, որտեղ նվաճեց մեկ տասնյակից ավելի ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ: Այժմ նա համառորեն պատրաստվում է ծանրամարտի համաշխարհային մրցումներին:

Մեր ցանկությունն է՝ Սիփան Շիպակցյանին տեսնել աշխարհի չեմպիոնի տիտղոսում:

ԱԶԱՏ ՇԻՊԱԿՑՅԱՆ

գ.Ազավրեթ Ախալքալաքի մունիցիպալիտետ

PSP

25 000 LUR

ԱՎՏՈՄԵԹԵՆԱ

ՎԵՐԱՆՈՐՈՂՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍԱՐԻԹԱՆԱՅՈՒՄ

ՌԻՍԻՑՈՒՄ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

2000 LUR

ՅՈՒՐԱՔԱՆՉՈՒՐ 10 LURԻ ԴԻՄԱՑ ՄՏԱՑԵՔ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ 1 ՏՈՄՍ

ՊԻՐՏԸ 10 ՏԱՐԵՎԱՆ Է

2000

(032) 2 40 20 20 www.card.psp.ge +20 20

ՀՐԲԵԼՅԱՆՆԵՐ

«ՎԵՐՆԱՏՈՒՆԸ» 20 ՏԱՐԵԿԱՆ Է

Ուղիղ 20 տարի առաջ, Թբիլիսիում հիմնվեց եւ պաշտոնական գրանցում ստացավ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, որի նախագահ ընտրվեց բանաստեղծ, հասարակական գործիչ ժորա Սնիսյանը: «Վերնատուն» 20-ամյակի տոնախմբությունը, տեղի ունեցավ Թբիլիսիում վերջերս բացված «Յոնիանես Թունանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում: Այն հարկի տակ, ուր Մեծն Թունանյանը հիմնել էր՝ 19-րդ դարի հայ գրական փառանքը ներկայացնող «Վերնատուն» գրական խմբակը:

Ողջունելով ներկայից Կենտրոնի ղեկավար Գիսանե Յոնիանյանը խոսք փոխանցեց ժորա Սնիսյանին, ով հանգամանորեն անդրադարձավ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության ստեղծման ջանադիր գործին, եւ այսօր ակնհայտ վիրահայ գրական մշակույթի երկու տասնամյակի բեղմնավոր աշխատանքի պատշաճ հունձքին՝ «Վերնատուն» տարեգրքի եւ պատանի ստեղծագործողների «Զարթոնք» ժողովածուի հրատարակություններին: «20 տարվա ընթացքում, բացի «Վերնատուն» տարեգրքի 11 եւ «Զարթոնքի» 9 հրատարակությունների, մենք հրատարակել ենք նաեւ 120 հեղինակային գրքեր», - ասաց ժորա Սնիսյանը:

Նա շնորհակալությամբ նշեց հանրապետական «Վրաստան» հայալեզու թերթի կարելու դերը ստեղծագործ ուժերի հայտնաբերման ուղղությամբ: Նա խոսեց Վրաստանի վրաց եւ հայ գրողների միությունների համագործակցության մասին, որ «Վերնատուն» տարեգրքում շարունակաբար արտահայտվում է թարգմանական խորագրերով, փոխադարձ թարգմանություններով, համատեղ գրական միջոցառումներով:

Վրաց ու հայ գրականությունների մերձեցման գործում առանձնակի ընդգծելով Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլու մեծ ավանդը՝ Սնիսյանը Մաղվալա Գոնաշվիլուն փոխանցեց Յայաստանի գրողների միության բարձր պարգևեր ունեցող, Գրականությունների մատուցած վաստակի համար: Միջոցառմանը ներկա, Վրաստանում

տանում Յայաստանի դեսպանության խորհրդակցական Արտակ Գրաբսկին փոխանցեց Յայաստանի նորանշանակ դեսպան Ռուբեն Սադոյանի ողջույնը:

Իր ելույթում նա նաեւ, մասնավորապես, ասաց. «Շատ կարելու



վի Շահնագարը Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը դիտեց երկու ժողովուրդների բարեկամության խորհրդանշաններից մեկը:

«Արեւիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ, «Արեւիկ» մանկա-պատանեկան թերթի խմբագիր, պրոֆեսոր Էմմա Ախտյանը վիրահայ գրական ջանքերը վառ պահող վերնատունցիներին մաղթեց ստեղծագործական բարձունքներ:

Շնորհավորելով վերնատունցիներին «Յայաստան» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Լեւոն Զիդիյանը ստեղծագործական վերելքներ մաղթեց նրանց եւ ընթերցեց ժորա Սնիսյանի բանաստեղծություններից:

Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ «Многонациональная Грузия» թերթի խմբագիր Միխայիլ Այդինովը, ռուսալեզու մամուլի անունից շնորհավորելով վերնատունցիներին, հարկ համարեց հիշեցնել, որ, եթե օտարախոս հայի հոգում կա հայը, կսիրի հայկականը, անկախ նրանից, թե ինչ կրթություն է ստացել:

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ, Տեր Վիրապ քահանա Ղազարյանը փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի շնորհավորանքն ու օրհնությունը: Նա կարեւորեց հայ մտավորականի դերը ազգի լինելության ճանապարհին եւ այդ առումով բարձր գնահատեց նաեւ ներկայիս վիրահայ գրողների գործունեությունը:

Միջոցառման ընթացքում «Վերնատուն» միության անդամներ, վիրահայ բանաստեղծներ Լուսինե Վանոյանը, Ալբերտ Իսոյանը, Սլավա Մելքոնյանը, Արտյոմ Կիրակոզովը, Միխայիլ Անանովը, Յաքոբնակ Պողոսյանը, Գարրի Ղալամբարովը, ինչպես եւ միջոցառմանը հրավիրված վրաց բանաստեղծ Գուրամ Ճավճահիձեն հանդես եկան սեփական ստեղծագործություններով ընթերցմամբ:

Է, որ «Թունանյանի տունը» ավանդույթները շարունակվում են. վիրահայերը, պահպանելով սեփականը, միաժամանակ հարստացնում են նաեւ վրաց մշակույթը»:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրդյանը բարձր գնահատեց Միության, մասնավորապես, նրա նախագահի ավանդը վիրահայ գրականության պահպանման ու զարգացման գործում: Նա առաջարկեց մնալ միջոցառումները դարձնել լայնամասշտաբ՝ ի լուր նաեւ վրաց հանրության:

Վրաստանի գրողների միության համանախագահ, բանաստեղծ Մաղվալա Գոնաշվիլին նորաբաց «Թունանյանի տունը» արժեւորեց իբրեւ անցյալի լուսապսակով օժիված օջախ, որտեղ թեւածել է համամարդկային սերը: Նա իր հայ գրչակիցներին կոչեց ցույց տալ ներկայիս պատանիներին, որ աշխարհը ոչ թե ատելությամբ, այլ սիրով է կառուցված:

Բանաստեղծ-թարգմանիչ Գի-

«ԱՐԵՎԻԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄՆ ՈՒ ՆՐԱ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկտեմբերի 2-ին, Վիրահայոց թեմի կրթամշակութային կենտրոնում, հանդիսավորապես նշվեց «Արեւիկ» բարեգործական հիմնադրամի հիմնադրման 15-ամյակը, որին ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրդյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնագարը, Թբիլիսիի Պ. Աղանյանի անվան պետհայդրամայի թատրոնի ռեժիսոր Ռոման Մաթիաշվիլին, Վրաստանի հայ գործարարների միության նախագահ Սամվել Աղեկյանը, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի փորձագետ Կարինե Մանուկյանը, մտավորականներ, շարքային թբիլիսցիներ:

Բ ա ց ման խոսքով հանդես եկավ «Արեւիկ» հիմնադրամի նախագահ, նույն անունի «Արեւիկ» մամուլապատանեկան թերթի խմբագիր, պրոֆեսոր Էմմա Ախտյանը: Երեկոյի ներկայներից շատերը տիկին էմմայի շուրթերից առաջին անգամ լսեցին այն բազում բարեգործությունների մասին, որ այդ տարիների ընթացքում կատարել է հիմնադրամը...

Այդ, առանց գովազդների է «Արեւիկը» իրագործել վիրահայ երեխաների աջակցության բարի գործերը, նյութական նվիրատվությունները, նպաստները: Տիկին էմման անդրադարձավ հիմնադրամի կողմից մեկ ու կես տասնամյակում Թբիլիսիի ու հայաբնակ շրջանների կրթամշակութային օջախներում իրագործված բարեգործական ակցիաներին, մանուկների ստեղծագործությունների ցուցահանդեսների հետեւողական աշխատանքներին: Նա երախտագիտության խորին զգացումով, անուն առ անուն, բարձրաձայնեց հիմնադրամին եւ նրա օրգան «Արեւիկ» թերթին հովանավորողներ Մանուկ Աղանյանի, Սամվել Աղեկյանի, Ռաֆայել Արզումանյանի, Մկրտիչ Օբրոյանի, Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի, Անուշ Սանոսյանի, ինչպես եւ Յայաստանի սպիտուքի նախարարության աջակ-

ցության մասին: Ներկայից ողջունեցին եւ իրենց շնորհակալանքը հայտնեցին հիմնադրամի փոխնախագահներ Ինգա Աղեկյանն ու Արդա Բարսեղյանը: Տեսաժապավենով արեւիկցիներին շնորհավորեցին նրա արտասահմանյան աջակիցներն ու ընթերցողները:

«Արեւիկ» հիմնադրամի բարեգործական եւ հայապահպան գործունեությունն արժեւորեցին եւ նրան հաջողություններ մաղթեցին Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, Վան Բայբուրդյանը, Գիվի Շահնագարը, Կարինե Մանուկյանը, Ռոման Մաթիաշվիլին, Սամվել Աղեկյանը:

Երեկոյի գեղարվեստական մասը վարեցին Էդուարդ Քոչարյանն ու Աննա Միքայելյանը: Թիվ 104 դպրոցի երգչախումբը առաջին անգամ հնչեցրեց արեւիկցիների հիմնը (խոսքերի եւ երաժշտության հեղինակ՝ երգչախմբի ղեկավար Մ.Արշակյան), մասնակցեցին երգիչ, Պ. Աղանյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Չեմրիխ Պետրոսյանը, ուսանողներ Լիանա Մարգարյանը, Անի Յովհաննիսյանը, Արդա Բարսեղյանը, թիվ 104 դպրոցի աշակերտուհի Աննա Անանովան:



Խորագրի նյութերը՝ ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱՊԱՅՆՆԵՐ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՃԱՆՅՑՎԵԼ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ԽԱՄՏՄԱՆ 913 ՓԱՍՏ ԵՎ ՄԱՔՍԱՆԵՆԳ ՈՍԿԵ ԶԱՐԴԵՐ

Նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 3-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի ղեկավարամենտի կողմից երկրի մասշտաբով իրականացված վերահսկիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 913 փաստ: Մասնավորապես, եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 3702 հարկատու: Ստուգման արդյունքում, վավերացվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները՝ առանց ապրանքագրի ապրանքների տեղափոխման 106 դեպք, տնտեսական գործունեության համար հարկատուների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի

խախտման 76 դեպք, կանխիկ գումարով առքուվաճառքի ժամանակ գանձարկային սարքի չօգտագործման 731 դեպք: * * *

Դեկտեմբերի 3-ին «Կարմիր կամուրջ» անցակետում Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Ադրբեյջանի քա-

ղաքացի Գ.Ս.-ի ուղեբեռը: Խուզարկության ժամանակ հայտնաբերվել են չհռչակագրված ոսկե զարդեր, ընդհանուր՝ 4336 գրամ քաշով: Մաքսանենգ ապրանքի մաքսային արժեքը կազմում է 5756.97 լարի: Վրաստանի հարկային օրենսգրքի համաձայն, իրավախախտում թույլ տված անձը տուգանվել է վերոնշյալ նույնչափ գումարով:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԶՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Դեկտեմբերի 4-7-ը, Համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO) եւ ՄԱԿ-ի թմրանյութերի ու հանցագործությունների դեմ պայքարի բյուրոյի (ONODC) համատեղ նախագծի՝ կոմսոյեներների վերահսկողության ծրագրի շրջանակներում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունում աշխատանքային այցով գտնվում էին Ուկրաինայի պետական ֆինանսական ծառայության, մաքսային իրավախախտումների դեմ պայքարի ղեկավարամենտի պետ Վասիլի Պոլոզիցը, Օդեսայի տարածաշրջանային մաքսային ծառայության պետ Ալեքսանդր Վլասովը եւ վերջինիս տեղակալ Ալեքսանդր Խուկովսկին:

Կոմսոյեներների վերահսկողության ծրագրի շրջանակներում, հյուրերը եղան Վրաստանում գործող համատեղ միջգերատեսչական ստորաբաժանումներում, որոնք տեղակայված են Թբիլիսիի օդանավակայանում ու Փոթիի նավահանգստում: Հյուրերն աշխատանքային հանդիպում ունեցան Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային ղեկավարամենտի ղեկավարների, ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայության եւ ներքին գործերի նախարարության պարեկային ոստիկանության ու կենտրոնական քրեական ոստիկանության ղեկավարամենտի ներկայացուցիչների հետ:

Փոթիի եւ Բաթումիի նավահանգիստներ, դիտեցին ձեակերպումների տնտեսական գոտիները եւ ծանոթացան ապրանքների ձեակերպման մաքսային ընթացակարգերին:

Դեկտեմբերի 5-7-ը Ուկրաինայի պատվիրակության անդամները եղան Սարգիի անցակետում, այցելեցին



ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ



ՆԱԽԱԳԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Հայաստանի նախագահ, Ձինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը, հայկական երկու հանրապետությունների փոխգործակցության շրջանակում, աշխատանքային այցով, գտնվում էր Արցախի Հանրապետությունում:

Այցի շրջանակներում, Սերժ Սարգսյանը Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ, այցելեց Պաշտպանության բանակի շտաբ, որտեղ տեղի ունեցավ ավանդաբար անցկացվող տարեկան խորհրդակցություն՝ Հայաստանի և Արցախի պաշտպանության նախարարների և բարձրաստիճան հրամակազմի ներկայա-

դակցության մասնակիցները լսել են Պաշտպանության բանակի հրամանատարի զեկույցը:

Սերժ Սարգսյանը, հայկական երկու հանրապետությունների փոխգործակցության շրջանակում, Բակո Սահակյանի հետ այցելեց «Ասպարեզ» ուսումնական կենտրոն, որտեղ նրանց ներկայացրին հայկական արտադրու-

թյան նոր գինտեխնիկայի մարտավար-տեխնիկական բնութագրերը և նշանակությունը, որից հետո նախագահները դիտաշտարակից հետեւեցին դրանց կիրառման ընթացքին:

Ստեփանակերտում հայկական երկու հանրապետությունների մախագահները, մարշալ Հովհաննես Բաղդասյանի ծննդյան 120-ամյակի առիթով, այցելեցին մեծ զորավարի հուշարձանին՝ ծաղիկներ դրեցին և հարգանքի տուրք մատուցեցին նրա հիշատակին:

ՄՏԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆ ԼԳ-ՈՒՄ ԱՐՎԱՏՈՒԿՅԱՆ ԱՌԵՂՈՒԹՅԱՆ



Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում ԵԱՀԿ արդարօրոճ-նախարարների խորհրդի 24-րդ նիստին ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ, Վրաստանի խորհրդարանի պարզամավոր Գիորգի Շերեթելին մրահոգի է համարում Լեռնային

Ղարաբաղում լարվածության աճը: Այս մասին նա հայտարարեց Վիեննայում ԵԱՀԿ արդարօրոճ գործերի նախարարների խորհրդի նիստի բացման արարողությանը: «Լարվածության և թնամանքի աճը Լեռնային Ղարաբաղում լուրջ մրահոգության առիթ է»,- հայտարարել է Շերեթելին: Նա հիշատակեց նաև ուկրաինական ու վրաստանական խնդիրները: «Այս հակամարտությունների հետեւանքով, շարժարկային կյանքեր են խեղդել: Հուսով եմ, որ այս սեղանի շուրջ մենք կգտնենք քաղաքական կամք՝ առաջ մղելու մեր ջանքերը խաղաղության և վստահության կառուցման հարյուն»,- ասաց ԵԱՀԿ ԽՎ նախագահը:

ՆԵՐԿԱՅԱՆՎԵՑ «ՀԱՎԱԿՈՒՄԻՆՈՒՄՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՏՖՈՐՄ» ԿԱՅՔԸ

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Խորհրդին է ներկայացվել «Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլանֆորմ» կայքը, որտեղ տեղադրվել է Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրակա-

նացման 2015-2018 թթ. հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը: Ձեկուցվել է, որ կայքը հնարավորություն կտա հանրությանը վերահսկողություն իրականացնել

հակակոռուպցիոն միջոցառումների նկատմամբ, հղել առցանց հարցումներ գերակա ոլորտների գործողություններն իրականացնող մարմինների, ինչպես նաև հակակոռուպցիոն ծրագրերն իրականացնող մյուս գերատեսչությունների պատասխանատուների նկատմամբ: Այժմ ընթացքի մեջ են տեխ-

նիկական աշխատանքները. ակնկալվում է, որ կայքը կսկսի գործել մինչև տարեվերջ:

Օրակարգի հաջորդ հարցով ներկայացվել են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի, համակարգի կայացմանն ուղղված պրակտիկ մեխանիզմները:

ՀԱՅԿԱԿԱՆ «ՔՈՇԱՐԻՆ»՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

Հարավային Կորեայի Ձեջու կղզում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի 12-րդ նստաշրջանում, Կոմիտեն «Քոշարի»-ն Հայաստանի հայտնվ գրանցեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ներկայացուցչական ցանկում:

Ավելի վաղ, այս տարի «Քոշարի. ավանդական խմբապար» Հայաստանի հայտը ոչ նյութական մշակութային ժառանգության անկախ փորձագետների կողմից բոլոր չափորոշիչներով դրական էր գնահատվել:

Հայաստանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան վավերացրել է 2006թ. և մինչ օրս ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության

ներկայացուցչական ցանկում արդեն գրանցել է «Դուրդուկ ու իր երաժշտությունը» (2008թ.), «Հայկական խաչքարի արվեստ. խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը» (2010թ.), «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսերումները» (2012թ.), «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսերումները Հայաստանում» (2014թ.) տարրերը:

Բացի այդ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր

կոնֆերանսի նստաշրջանում այս տարի հաստատվել են Հայաստանի մշակույթի նախարարության նախապատրաստած հայտերը՝ «Կոմպոզիտոր, էթնոերաժշտագետ, բանահավաք, երգիչ Սողոմոն Սողոմոնյանի հայտնի Կոմիտաս Վարդապետի (1869-1935թթ.) ծննդյան 150-ամյակը» (Ֆրանսիայի ու Գերմանիայի աջակցությամբ), և «Բանաստեղծ, գրող, թարգմանիչ Հովհաննես Թումանյանի (1869-1923 թթ.) ծննդյան 150-ամյակը» (Վրաստանի ու Ռուսաստանի աջակցությամբ) խորագրով հայտերը, և որոշում է ընդունվել դրանք ընդգրկել ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակվող մարդկանց և կարելու իրադարձությունների հոբելյանների 2018-2019 թթ. օրացույցում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ ԸՆԳՈՒՄԵՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2018 ԲՎԱԿԱՆԻ ԳԵՏԵՑՈՒՄԵՆ ԵՄԵՍԱԳՐՈՇ

Հայաստանի Ազգային ժողովը քվեարկությամբ հաստատեց Հայաստանի 2018թ. պետական բյուջեի նախագիծը կողմ քվեարկեց 64, դեմ 35 պատգամավոր: ՀՀԿ խմբակցությունում համարում է, որ կառավարությունը բավականին հեռանկարային ծրագիր է ներկայացրել. 2018 թվականի բյուջեն նպատակային է միտված ապագային: «Ծառուկյան» խմբակցությունը գտնում է, որ բյուջեի ներկայացված նախագիծը լուրջ հիմքեր չի ստեղծում տնտեսական աճի և տնտեսական զարգացման համար, ուստի իրենք չեն կարող կիսել դրա քաղաքական պատասխանատվությունը ու դեմ են քվեարկելու: Բյուջեի նախագիծն դեմ քվեարկեց նաև «Ելք» խմբակցությունը:

SUPPOTUS ՓՈՒՍԵՆԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ

(8 դեկտեմբերի) Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետքայլ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՏԱՌՔ
ԱՄՆ ԴՈՒՍԻ	484.00	487.00
ԵՎՐՈ	567.00	574.00
ՌՈՒԲԼԻ	8.11	8.25

Դեկտեմբերի 1-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 1.0 դրամով:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ» ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵԹԵՐԻՑ ՀԵՌԱՑՆԵԼ ԾԱԽՈՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ ՈՒ ՎԱՅ-ՓՈՐՉԱԳԵՏՆԵՐԻՆ

«Ռուսաստանի հայերի միությունը» հանդես է եկել հայտարարությամբ, որում դատապարտել է վերջին շրջանում ռուսական ՋԼՍ-ներում Հայաստանի դեմ ծավալված արշավը: Միությունը Ռուսաստանի իշխանություններից պահանջում է եթերից հեռացնել «ծախու լրագրողների»: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասված է.

«Ս.թ. նոյեմբերի 24-ին, Հայաստանի և Եվրամիության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումից հետո, ռուսաստանյան որոշ լրատվամիջոցներով տոգետ և ծախու լրագրողների ու վայ-քաղաքական գործիչների կողմից անսպասելիորեն ծավալվեց հակահայկական արշավ, որում նրանք փորձել են այդ համաձայնագիրը ներկայացնել որպես Հայաստանի Հանրապետության քաղաքական ուղեգծի փոփոխություն, Ռուսաստանի և Եվրոպական տնտեսական միության (ԵՏՄ) դաշնակիցների հետ դաշնակցային հարաբերությունների հանդեպ դավաճանություն և, առհասարակ, որպես հայկական քաղաքական վեկտորի փոփոխություն:

Որոշները հավասարության նշան են դրել Հայաստանի և Ուկրաինայի, Մոլդովայի ու Վրաստանի ուղեգծերի միջև: Դժվար է հասկանալ՝ ի՞նչն է այստեղ ավելի

շատ՝ տգիտություն, թե՞ արտաքին ուժերի շահերի ոչ անշահախնդիր սպասարկումը, որոնք ցանկանում են լարվածություն ստեղծել հայ-ռուսական հարաբերություններում, սեպ խրել ՀԱՊԿ-ի և ԵՏՄ-ի դաշնակիցների միջև...»

Այս հայտարարության մեջ նշվում է, որ ԵՏՄ-ի հետ բանակցությունների ընթացքում հայկական կողմը իր դաշնակիցներին տեղյակ է պահել առաջիկա որոշման մասին, չի եղել առաքելություն ռուսաստանյան իշխանությունների կողմից, որի մասին է վկայում Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) և մյուս մարմինների կողմից հայտարարությունների բացակայությունը:

Չափազանց անպատասխանատու այս լրագրողների ու քաղաքական գործիչների գործողությունները ցատում են հարուցել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝

Ռուսաստանի բազմամիլիոնանոց հայկական համայնքում՝ որպես երկու երկրների միջև խնդիր ստեղծելու և ռուսաստանյան հանրության աչքում Հայաստանի բացասական կերպար կերտելու փորձ:

Այնուհայտ է, որ այդ մարդիկ հանդես են եկել հորինված մեղադրանքներով Հայաստանի հասցեին հայ-ռուսական հարաբերությունները բարդացնելու նպատակով, քանի որ Հայաստանը այն քիչ երկրներից է, անգամ ԵՏՄ անդամների թվում, որոնք հետեւողականորեն աջակցում են Ռուսաստանին ինչպես Դրիմի, այնպես էլ՝ ռուսաստանյան արտաքին քաղաքականության բավականին զգայուն մյուս հարցերում:

«Ռուսաստանի հայերի միությունը» հայտնում է Ռուսաստանի հայրենակիցների վրդովմունքը, որոնք Ռուսաստանի քաղաքացի են, և որոնք չեն հասկանում, թե ինչպես են այդ մարդիկ հարթակ ստացել ռուսաստանյան հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներում՝ խեղելով ու աղճատելով Ռուսաստանի ամենամոտ դաշնակցի քաղաքականությունը:

Մենք դիմում ենք իշխանական կառույցներին, որոնք, հուսով ենք, որոշակի

ազդեցություն ունեն ռուսաստանյան լրատվամիջոցների վրա, և հեռուստատեսությունից ու ՋԼՍ-ների ղեկավարներին պահանջելով եթերից հեռացնել այդ ծախու լրագրողներին, վայ-քաղաքական գործիչներին ու մարդիկալ «փորձագետներին», որոնց դիրքորոշումն արձագանք չի գտնում ռուսաստանյան հանրության շրջանում, քանի որ դա, նախեւառաջ, վնասում է բուն այդ լրատվամիջոցներին, որոնց միջոցով տարածվում է տգիտություն կամ գիտակցված ապատեղեկատվություն, և այն սեպ է խրում մեր եղբայրական ժողովուրդների ու երկրների միջև:»

Վերջին շաբաթներին ռուսաստանյան մի շարք լրատվամիջոցներում, մասնավորապես, «Չվեզդա» և ԻՏԻԻ հեռուստատեսությունը հեռարձակել են հակահայկական հաղորդումներ, որոնց ընթացքում մեղադրանքներ են վիրավորական արտահայտություններ են հնչել Հայաստանի հասցեին, անգամ՝ գուգաիտներ անցկացվել անբարոյական կնոջ հետ, որը դավաճանում է ամուսնուն՝ նկատի ունենալով վերջերս Հայաստանի կողմից ԵՏՄ-ի հետ համաձայնագրի ստորագրումը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

10.12.2017. Բարեկենդան Սուրբ Հակոբի պահքի



Բարեկենդան Սուրբ Հակոբի պահքի տոնը նշվում է դեկտեմբեր ամսվա առաջին կիրակիներից մեկի ժամանակ: Բարեկենդան (բառացի բարի կենդանություն, ուրախություն), գլխավոր շաբաթապատերին նախորդող շաբաթ օրը:

12.12.2017. Սուրբ Կոռնելիոս հարյուրապետի եւ Շնավորնի՝ Քրիստոսի ազգականի, որ խաչվեց Երուսաղեմում եւ Ջնյունհայի Պողոկարպոս Հայրապետի ու արեւելքի սուրբ վկաների կողմից, օր

ԵՂԱՆԱԿ

ՁՄՈՒՆԸ ՈՒԺԵՂ

ՍԱՌՆԱՄԱՆԻՔՆԵՐ ԶԵՆ ԼԻՆԻ

Վրաստանի շրջակա բնության ազգային գործակալությունը տարածել է հաղորդագրություն 2017-2018 թվականին եղանակային կանխատեսումների մասին: Տարածված հայտարարության մեջ նշված է, որ օդի միջին ջերմաստիճանը կլինի նորմայի շրջանակներում:

Նշված հաղորդագրության մեջ, գործակալությունը, հենվելով միջազգային կազմակերպությունների տվյալների վրա, նշում է, որ Հարավարևելյան Եվրոպայում ու Կովկասում եղանակը մեծապես կախված կլինի հաղաղ եւ Ատլանտյան օվկիանոսներում ընթացող ու հնարավոր գործընթացների հետ: «Այդ պատճառով մեծ հավանականությամբ (80 տոկոս) ենթադրվում է, որ վերոնշյալ տարածաշրջաններում առաջիկա ձմռանը միջին ջերմաստիճանը կլինի նորմայի մոտ»,- ասված է գործակալության հաղորդագրության մեջ:

Գործակալության պարզաբանումներով, ձմռան առաջին կեսին Վրաստանում ջերմաստիճանը կլինի սովորականից 10 աստիճանով բարձր, իսկ երկրորդ կեսին՝ Արեւմտյան Վրաստանի հարթավայրերում այն կհասնի +5°+7°, լեռներում՝ 0+2°, բարձրալեռ շրջաններում՝ -4°+4°, իսկ Արեւելյան Վրաստանի հարթավայրերում՝ +1°+5°, լեռներում՝ -1°+4°, բարձրալեռ շրջաններում՝ -5°+5°:

ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՐՈՒ ՀԵՏ

Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի աշակերտական «Ոսկե փետուր» գրական ակումբը, որը ղեկավարում է 9-րդ դասարանի աշակերտ Գեորգ Փերիխանյանը, իր գոյության 4 տարիների ընթացքում, գրական մշակույթի հետ հաղորդակցվելու ուսանելի հանդիպումներ է անցկացրել Թբիլիսիում գործող ստեղծագործողների հետ:

Այս անգամ ոսկեփետուրիցները հանդիպեցին թբիլիսցի բանաստեղծուհի Լուսինե Վանոյանի հետ ու նորից վայելեցին կենդանի բանաստեղծի հետ հանդիպման մեծագույն խորհուրդը: Նրանց համար հաճելի էր լսել, որ Լուսինե Վանոյանը սովորել է Թբիլիսիի Երրորդ մասիվում գտնվող հայկական դպրոցներից մեկում՝ այսօր փակված թիվ 109-ում: Ստեղծագործել է

աշակերտական օրերից եւ այսօր բանաստեղծական ժողովածուի հեղինակ է ու Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ:

Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի փորձագետ Կարինե Մանուկյանը, գրող էլ երաժիշտ Արտյոմ Կիրակոզովը արժեւորեցին բանաստեղծու-

հու վիրահայ գրական մշակույթին բերած ավանդը:

Միջոցառման ավարտին, դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը շնորհակալության խոսք հղեց նրա պատանի կազմակերպիչներին, ներկա հյուրերին ու ծնողներին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՆՅԱՆ



ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ՝ ՍԻՐՈՂԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ



Թբիլիսիի «Հովի. Թունանյանի տանը» տեղի ունեցավ հանդիպում Թբիլիսիում գործող սիրողական թատրոնի ներկայացուցիչների հետ:

Երեկոն բացեց «Թունանյանի տան» ղեկավար Գիսանե Հովսեփյանը, ով խոսքը փոխանցեց գրող եւ երաժիշտ Արտեմ Գրիգորենցին (Կիրակոզով), որը հանդես է

գալիս՝ որպես սիրողական թատրոնի ղեկավար:

Հանդիպմանը ցուցադրվեցին սիրողական թատրոնի տարբեր բեմադրությունների տեսահոլովակները, որտեղ

հանդես են գալիս տարբեր մասնագիտությունների մարդիկ: Մանկավարժ Գարրի Ղաւանքարովի եւ ինժեներ-մեխանիկ Իրինա Գրիգորյանի մասնակցությամբ ներկայացվեցին առանձին դրվագներ Ա.Գրիգորենցի «Հուսով լինեմք» պիեսից: Նշենք, որ այդ պիեսի՝ Գիսանե Հովսեփյանի կողմից հայերեն թարգմանությունը հրատարակվել է երեւանյան «Դրամատուրգիա» ամսագրում, որի խմբագիրը

ծնունդով ջավախեթցի Կարինե Խողիկյանն է:

Սիրողական թատրոնի մասին իրենց նկատառումներով հանդես եկան բանաստեղծ Վլադիմիր Սարիշվիլին, կինոռեժիսոր Թեմուր Մալանիան, կոմպոզիտոր Իրակլի Ցինցաձե, գիտաշխատող Սամվել Մկրտչյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

ՄՐՍԵՆ ԲԱՐԱՎԱԶՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄՆԵՐ՝ ԱՎՏՈՃԱՆԱԴԱՐՆԵՐԻՆ

Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտից ստացած տեղեկության համաձայն, դեկտեմբերի 8-ից Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրասպորտային միջոցների համար:

Վրաստանի ողջ տարածքում, առատ ճանապարհային պատճառով, առանձին ճանապարհների վրա սահմանվել են որոշակի սահմանափակումներ:

Մասնավորապես, միջազգային նշանակության Ախալցխե-Նինոծմինդա (Հաստատանի սահման) ավտոճանապարհի

90-112-րդ կմ (Նինոծմինդա-Հայաստանի սահման) եւ միջազգային նշանակության Ախալքալաքի-Կարծախ (Թուրքիայի սահման) ավտոճանապարհի 1-36 կմ ճանապարհահատվածներում արգելվում է կիսակցիցներով ավտոտրանսպորտի եւ մինչեւ 30 տեղանոց տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

Table with 10 columns and 10 rows containing numbers 1 through 61, with some cells empty or containing different numbers.

Large advertisement for 'VRASTAN' (ՎՐԱՍՏԱՆ) featuring a list of services, contact information, and a logo. The text includes details about various services offered in Tbilisi, Georgia.

Footer section with contact information for 'VRASTAN' (ՎՐԱՍՏԱՆ) in Tbilisi, Georgia. It includes phone numbers, website, email, and address details.